ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԴԱՎԹՅԱՆ ԷՐԻԿ ՎԱՐԴԱՆԻ

ԹՈՒՐՔԻԱ-ՎՐԱՍՏԱՆ-ԱԴՐԲԵՋԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՌԱԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1991-2016ԹԹ.

Է.00.02 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆ. Վ. Ա. Բայբուրդյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆ. Կ. Հ. Խաչատրյան

պ.գ.թ. Ն. Ս. Նավասարդյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թ. հունիսի 5-ին՝ ժամը 13:00-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. մայիսի 3-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտքարտուղար՝ պ.գ.թ. Մ. Հ. Ղահրիյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հարավային Կովկասում արդի շրջանի աշխարհաքաղաքական գործընթացների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հատկապես վերջին տարիներին Վրաստանն ու Ադրբեջանը իրենց արտաքին քաղաքականությունը կառուցարկելիս, այլ պետությունների հետ ավանդական երկկողմ հարաբերություններից բացի, սկսեցին ավելի մեծ տեղ տալ տարածաշրջանի կամ հարակից տարածաշրջանների պետությունների, ինչպես նաև տարածաշրջանի ուժային կենտրոնների հետ բազմակողմ և կայուն փոխգործակցության ձևաչափերի ստեղծմանն ու ամրապնդմանը: Այդ իրողությունները անհրաժեշտ են դարձնում Հարավային Կովկասում տարածաշրջանային համագործակցության նման դրսևորումների մասին խորը և համակողմանի ուսումնասիրություններ կատարելը:

Նմանատիպ բազմակողմ գործընկերության ձևաչափ է Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցությունը: Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (ԲԹՋ) նավթամուղի նախագծի հաջող կենսագործումը և դրանից բխած հետևանքները ցույց տվեցին, որ այդ համագործակցությունը ունի Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական գործընթացների վրա լուրջ ազդեցություն թողնելու լծակներ, որոնք էլ ավելի ամրապնդվեցին Բաքու-Թբիլիսի-Էրզրում (ԲԹԷ) գազամուղի գործարկումից և Բաքու-Թբիլիսի-Կարս (ԲԹԿ) նախագծի նախաձեռնումից հետո: Հետագա տարիներին եռակողմ համագործակցությունը ձեռք բերեց նաև ռազմաքաղաքական բաղադրիչ, որի խորը ուսումնասիրությունը կարևոր է տարածաշրջանային անվտանգության հիմնախնդիրների համատեքստում:

Թեմայի ուսումնասիրությունը արդիական է նաև նրանով, որ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև եռակողմ համագործակցությունը շարունակական գործընթաց է և շարունակում է զարգանալ մինչ օրս: Ուստի սույն թեմայի համակողմանի և խորը ուսումնասիրությունը թույլ կտա առավել լավ հասկանալու արդի շրջանում և ապագայում երեք երկրների եռակողմ համագործակցությունում տեղի ունեցող և սպասվելիք զարգացումները:

Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցության թե՛ տնտեսական, թե՛ ռազմաքաղաքական բաղադրիչները որոշակի առնչություն ունեն ՀՀ անվտանգային շահերի հետ: Այն Հայաստանի սահմանակից պետություններից երեքն ընդգրկող տարածաշրջանային փոխգործակցության ձևաչափ է և, բնականաբար, աղերսներ ունի Հայաստանի հետ: Հետևաբար՝ արդիականություն է ստանում այս թեմայի ուսումնասիրությունը նաև Հայաստանի անվտանգային շահերի տեսանկյունից:

Թուրքիայի կողմից Վրաստանի և Ադրբեջանի անկախության ճանաչումից և դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո երեք պետությունները սկսեցին տարբեր ոլորտներում ակտիվորեն զարգացնել

երկկողմ հարաբերությունները, որոնք համատեղ նախագծերի կենսագործումից հետո փոխազդեցության մեջ մտան Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի եռակողմ համագործակցության հետ: Բացի այդ՝ վերջինս որոշակի տեղ է զբաղեցնում նաև երեք երկրներից յուրաքանչյուրի արտաքին քաղաքականությունում, հետևաբար այս թեմայի ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել ներկայումս Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը, այդ թվում՝ Թուրքիա-Վրաստան, Թուրքիա-Ադրբեջան և Վրաստան-Ադրբեջան երկկողմ հարաբերություններն ավելի լավ հասկանալու համար:

Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցությունը որոշակի առնչություն ունի Հարավային Կովկասում այնպիսի կարևոր դերակատարների շահերի հետ, ինչպիսիք են Եվրամիությունը, ԱՄՆ-ն և Ռուսաստանը: Վերջիններս ուղղակիորեն կամ անուղղակիորեն զգալի, իսկ որոշ դեպքերում՝ էական ազդեցություն են ունեցել այդ համագործակցության ձևավորման և զարգացման ընթացքի վրա, հետևաբար արդի շրջանում ԵՄ-ի, Ռուսաստանի և ԱՄՆ-ի հարավկովկասյան քաղաքականությունը, այն պայմանավորող շահերը և նպատակները լավ հասկանալու տեսանկյունից արդիական է այս թեմայի համալիր ուսումնասիրությունը:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է վերհանել Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան տնտեսական և ռազմաքաղաքական եռակողմ համագործակցության առանձնահատկությունները 1991-2016թթ. և գնահատել այդ համագործակցությունը ՀՀ անվտանգային շահերի տեսանկյունից:

Այդ նպատակի իրականացման համար սահմանվել են հետևյալ խնդիրները.

1. Բացահայտել Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցությունում երեք պետություններից յուրաքանչյուրի շահերը, ուսումնասիրել և վերլուծել այդ համագործակցության տարբեր ոլորտների միջև փոխազդեցությունները, վերհանել եռակողմ համագործակցությունում առկա խնդրահարույց հարցերը:
2. Ուսումնասիրել կասպյան նավթի և գազի արտահանման հարցի շուրջ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի շահերի մերձեցման և եռակողմ համագործակցության ձևավորման ու զարգացման գործընթացը:
3. Վերլուծել և գնահատել Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան էներգետիկ համագործակցության ձևավորման և զարգացման գործընթացի վրա ԱՄՆ-ի, ԵՄ-ի, ՌԴ-ի ազդեցությունը և դրա դրսևորումները:
4. Վերլուծել և գնահատել տրանսպորտի ոլորտում Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի եռակողմ համագործակցության տարանցիկ ներուժը:
5. Վերհանել տրանսպորտի ոլորտում Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի եռակողմ համագործակցության առանձնահատկություններն ու հիմնական ուղղությունները:

6. Վերլուծել ուսումնասիրվող ժամանակահատվածում Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև առևտրաշրջանառության և փոխադարձ ներդրումների դինամիկան և գնահատել երեք պետություններից յուրաքանչյուրի արտաքին առևտրաշրջանառությունում և ներդրումային դաշտում մյուս երկու պետությունների դերը:

7. Ուսումնասիրել առևտրի և ներդրումների ոլորտում Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի ինստիտուցիոնալ համագործակցության դրսևորումները և դերը փոխադարձ ներդրումների և առևտրի խրախուսման գործում:

8. Ներկայացնել Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան ռազմաքաղաքական համագործակցության գործիքակազմը, պարզել այդ համագործակցության ինստիտուցիոնալացման նախադրյալները և արդյունքները:

9. Գնահատել Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան տնտեսական և ռազմաքաղաքական համագործակցությունը Հայաստանի անվտանգային շահերի տեսանկյունից, ուսումնասիրել այդ հարցի շուրջ Հայաստանում ծավալված պաշտոնական դիսկուրսը, ինչպես նաև վերլուծել Հայաստանի հետ այդ համագործակցության առնչակցության վերաբերյալ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի դիրքորոշումը:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Ատենախոսության ուսումնասիրության օբյեկտը Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև հարաբերություններն են, առարկան՝ Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցությունը էներգետիկայի, տրանսպորտի, առևտրի, ներդրումների և ռազմաքաղաքական ոլորտներում:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են անալիզի, սինթեզի, համեմատական, ինդուկցիայի, պարբերականացման, հարցազրույցների մեթոդները, կիրառվել է համակարգային մոտեցումը:

Ատենախոսության գիտական նորույթը: 1991-2016թթ. Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի տնտեսական ու ռազմաքաղաքական եռակողմ համագործակցության վերաբերյալ համակողմանի, խորը և համապարփակ ուսումնասիրություններ դեռևս չեն իրականացվել: Ատենախոսության գիտական նորույթը կարելի է ամփոփել հետևյալ կետերում.

- Համակողմանիորեն և խորապես ուսումնասիրվել է Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցության ձևավորումն ու զարգացումը 1990-ականներից մինչև 2016թ., դերը երեք պետություններից յուրաքանչյուրի արտաքին քաղաքականությունում, համագործակցության հաստատման նախադրյալները, դրանում առկա խնդրահարույց հարցերը: Ցույց է տրվել, որ առևտրի, ներդրումների, տրանսպորտի և անգամ ռազմաքաղաքական ոլորտներում Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցությունը ոչ միայն ածանցվել է նույն համագործակցության էներգետիկ բաղադրիչից, այլև մինչ օրս շարունակում է լրջորեն կախված մնալ էներգետիկ ոլորտից:

- Վերհանելով ԲԹԿ երկաթուղու նախագծի շուրջ Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցության առանձնահատկությունները և ուղղությունները՝ առանձնացվել է երկաթուղային տրանսպորտի ոլորտում եռակողմ համագործակցության երեք փուլ՝ 1993-2002թթ., 2002-2007թթ. և 2007թ.-ից մինչ այժմ:
- Հիմնավորվել է, որ ԱՄՆ-ն և ԵՄ-ն լրջորեն ազդել են Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի էներգետիկ եռակողմ համագործակցության վրա՝ ի տարբերություն տրանսպորտի ոլորտի, որտեղ ԲԹԿ նախագիծը բացառապես թուրք-վրաց-ադրբեջանական համագործակցության արդյունք է: Մասնավորապես՝ ցույց է տրվել, որ կասպյան նավթի արտահանման հարցի շուրջ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի համագործակցությունը կայացավ ԱՄՆ-ի գործուն աջակցության և ներգրավման շնորհիվ. միաժամանակ ԲԹԷ գազամուղի և Հարավային գազային միջանցքի (ՀԳՄ) պարագայում ԱՄՆ-ն սահմանափակվեց բավականին պասիվ գործունեությամբ, իսկ ԵՄ-ն ոչ մի դեր չխաղաց ԲԹՋ նավթամուղի նախագծի կենսագործման հարցում՝ փոխարենը իր նպաստը բերելով ՀԳՄ-ի շուրջ թուրք-վրաց-ադրբեջանական համագործակցությունը նոր մակարդակի բարձրացնելուն:
- Հանգամանորեն ուսումնասիրվել են Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցության և՛ տնտեսական, և՛ ռազմաքաղաքական բաղադրիչները Հայաստանի անվտանգային շահերի տեսանկյունից, մասնավորապես՝ այդ համագործակցության վերաբերյալ ՀՀ-ի դիրքորոշումն ու արձագանքները, ՀՀ անվտանգային շահերի հետ եռակողմ համագործակցության առնչակցության խնդրի շուրջ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի դիրքորոշումները: Ցույց է տրվել, որ այդ հարցի շուրջ վերջիններիս միջև առկա է լուրջ անհամաձայնություն, հիմնավորվել է, որ Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան տնտեսական և ռազմաքաղաքական համագործակցությունը չի սպառնում ՀՀ ազգային անվտանգությանը:
- Հիմնավորվել է, որ 2012-2016թթ. Վրաստանը սկսել է լրջորեն հետաքրքրվել այլընտրանքային համագործակցության ձևաչափերով (մասնավորապես՝ Հայաստանի և Իրանի հետ), ինչի արդյունքում Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան տնտեսական համագործակցությունը Վրաստանի համար կորցրել է այն բացառիկ անայլընտրանքային նշանակությունը, որ ուներ «Միացյալ ազգային շարժում» կուսակցության իշխանության տարիներին (2004-2012թթ.): Ցույց է տրվել, որ Վրաստանի տարածաշրջանային քաղաքականությունում նոր մոտեցման շնորհիվ նոր հնարավորություններ են ստեղծվել, և կարևոր առաջընթաց է գրանցվել տարածաշրջանային նախագծերում Հայաստանի ընդգրկման տեսանկյունից՝ դրանով ձախողելով Ադրբեջանի և Թուրքիայի ձգտումները՝ Վրաստանի հետ եռակողմ համագործակցությունը ծառայեցնելու ՀՀ մեկուսացման քաղաքականությանը:

Օգտագործված աղբյուրների և գրականության տեսություն: Սույն հետազոտության համար առաջնային նշանակություն է ունեցել Թուրքիա-

Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցության իրավապայմանագրային դաշտի ուսումնասիրումը: Ըստ այդմ՝ օգտագործվել է փաստաթղթերի հարուստ բազա, մասնավորապես՝ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև կնքված եռակողմ պայմանագրերը, համատեղ հայտարարություններն ու հռչակագրերը[1], ինչպես նաև երկկողմ այն պայմանագրերը[2], որոնք կարևոր նշանակություն են ունեցել եռակողմ համագործակցության կայացման կամ զարգացման գործում: Հաշվի առնելով կասպյան էներգակիրների հանդեպ միջազգային մեծ հետաքրքրությունը՝ Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան էներգետիկ համագործակցությունն ուսումնասիրելիս օգտագործվել են նաև շահագրգիռ պետությունների, Ադրբեջանի նավթարդյունաբերությունում ներգրավված մի շարք միջազգային նավթագազային ընկերությունների, ԵՄ-ի հետ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի ստորագրած փաստաթղթերը[3]:

Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցությունը Թուրքիայի, Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի, ԱՄՆ-ի արտաքին

---

[1] Տե՛ս, օրինակ, Agreement Among The Azerbaijan Republic, Georgia and The Republic of Turkey Relating to the Transportation of Petroleum Via the Territories of The Azerbaijan Republic, Georgia and The Republic of Turkey Through the Baku-Tbilisi-Ceyhan Main Export Pipeline, Istanbul, 18.11.1999, http://www.bp.com/content/dam/bp-country/en_az/pdf/legalagreements/BTC_eng_agmt4_agmt4.pdf (հասանելի է առ 28.05.2017թ.); Joint statement of the Presidents of Azerbaijan, Georgia and Turkey issued at Trabzon, Turkey, on 26 April 1998, http://dag.un.org/bitstream/handle/11176/46464/A_52_908%3BS_1998_406-EN.pdf?sequence=21&isAllowed=y (հասանելի է առ 30.10.2017թ.); Declaration on the Kars-Akhalkalaki-Tbilisi-Baky new railway connection project between the Republic of Turkey, Georgia and the Republic of Azerbaijan, done in Baku on May 25, 2005, http://repository.un.org/bitstream/handle/11176/255901/A_60_419-EN.pdf?sequence=3&isAllowed=y (հասանելի է առ 18.08.2016թ.):

[2] Տե՛ս, օրինակ, Intergovernmental Agreement between the Government of the Republic of Turkey and the Government of the Republic of Azerbaijan Concerning the Trans Anatolian Natural Gas Pipeline System, June 26, 2012, Istanbul, http://www.tanap.com/content/file/TANAPIGA.pdf (հասանելի է առ 14.11.2017թ.); Agreement between Georgia and the Republic of Azerbaijan Relating to the Transit, Transportation and Sale of Natural Gas in and beyond the Territories of Georgia and the Republic of Azerbaijan through the South Caucasus Pipeline System, September 29, 2001, Baku, https://www.bp.com/content/dam/bp-country/en_az/pdf/legalagreements/SHA_eng_intergov_Azerbaijan_Georgia_Intergovernmental_Agreement.pdf (հասանելի է առ 14.11.2017թ.):

[3] Տե՛ս, օրինակ, Ashgabat Declaration, 1 May, 2015, https://ec.europa.eu/commission/commissioners/2014-2019/sefcovic/announcements/ashgabat-declaration_en (հասանելի է առ 06.05.2017թ.); Host Government Agreement between and among the Government of Georgia and the State Oil Company of the Azerbaijan Republic, BP Exploration (Caspian Sea) Ltd., Statoil BTC Caspian AS, Ramco Hazar Energy Limited, Turkiye Petrolleri A.O., Unocal BTC Pipeline, Ltd., Itochu Oil Exploration (Azerbaijan) Inc., Delta Hess (BTC) Limited, done on April 28, 2000 in Tbilisi, https://www.bp.com/content/dam/bp-country/en_az/pdf/legalagreements/BTC_eng_agmt2_agmt2.pdf (հասանելի է առ 15.11.2017թ.):

քաղաքականության ու ազգային շահերի տեսանկյունից դիտարկելու և վերլուծելու համար օգտագործվել են այդ պետությունների կողմից ընդունված ազգային անվտանգության հայեցակարգերը և արտաքին քաղաքականության համար հայեցակարգային այլ փաստաթղթերը[4]: Եռակողմ համագործակցությունը ԵՄ շահերի տեսանկյունից դիտարկելու համար օգտագործվել են ԵՄ-ի կողմից ընդունված և հարավկովկասյան տարածաշրջանին այս կամ այն չափով առնչվող մի շարք փաստաթղթեր[5]:

Առանձնահատուկ նշանակություն են ունեցել արխիվային նյութերը: Օգտագործվել են, օրինակ, Վրաստանի ժամանակակից պատմության կենտրոնական արխիվի՝ ԱԳՆ-ի ֆոնդի նյութերը, մասնավորապես՝ 1990-ական թթ. Թուրքիայում և Ադրբեջանում Վրաստանի դեսպանության տարեկան հաշվետվությունները, տեղեկանքները, կնքված միջպետական փաստաթղթերը, որոնք արժեքավոր աղբյուր են Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան էներգետիկ և տրանսպորտային համագործակցության ձևավորման գործընթացի ուսումնասիրման համար[6]: ՀՀ անվտանգային շահերին Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցության առնչակցության և հատկապես այդ հարցում Վրաստանի դիրքորոշման ուսումնասիրման տեսանկյունից օգտակար են եղել ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական բաժնի նյութերը[7]:

Մասնագիտական գրականության մեջ արծարծվել են կա՛մ Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցության առանձին խնդիրներ, կա՛մ այդ համագործակցության հետ այս կամ այն չափով առնչվող հիմնախնդիրներ:

---

[4] Տե՛ս, օրինակ, The New Turkey Contract 2023, 2015, http://www.akparti.org.tr/upload/documents/2023-sozlesmesi-2015-en.pdf (հասանելի է առ 26.09.2017թ.); საქართველოს ეროვნული უსაფრთხოების კონცეფცია, 2011, https://nsc.gov.ge/res/docs/2014060215373342700.pdf (հասանելի է առ 14.11.2017թ.); Azərbaycan Respublikasının milli təhlükəsizlik konsepsiyası, 2007, http://www.mfa.gov.az/files/file/NSC.pdf (հասանելի է առ 22.11.2017թ.); ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, 2007թ., http://www.mil.am/media/2015/07/827.pdf (հասանելի է առ 16.11.2017թ.); A National Security Strategy for a New Century, White House, 1999, http://nssarchive.us/NSSR/2000.pdf (հասանելի է առ 13.11.2017թ.):

[5] Տե՛ս, օրինակ, Communication from the Commission to the European Council and the European Parliament, An Energy Policy for Europe, COM(2007) 1 final, Brussels, 10.1.2007, http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52007DC0001&from=en (հասանելի է առ 14.11.2017թ.); Communication from the Commission to the European Parliament and the Council, European Energy Security Strategy, COM(2014) 330 final, Brussels, 28.5.2014, http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52014DC0330&from=EN (հասանելի է առ 14.11.2017թ.):

[6] საქართველოს უახლესი ისტორიის ცენტრალური არქივი (სუიცა), ფონდი 1206, აღწერა 2, საქმე 1630, 1702, 1703, 1986, 2042, 2202, 2284, 2395; აღწერა 6, საქმე 6, 14, 24, 28, 49, 50, 90, 100, 1703.

[7] ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական բաժին, ց. 1, գ. 142, 147; ց. 7, գ. 236; ց. 10, գ. 126; ց. 12, գ. 165; ց. 18, գ. 165:

Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցության վերաբերյալ ուսումնասիրություններից կարելի է առանձնացնել Ա. Պետերսենի աշխատությունը[8], որտեղ ուսումնասիրված են միջազգային կառույցների, հատկապես՝ Համաշխարհային բանկի (ՀԲ) աջակցությամբ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի կողմից իրականացված բարեփոխումները էներգետիկ և տրանսպորտային եռակողմ համագործակցության նախապատրաստման համատեքստում: Եռակողմ համագործակցությունում երեք պետություններից յուրաքանչյուրի տեղն ու դերն պարզելու առումով իրենց ուսումնասիրությունում ուշագրավ դիտարկումներ են կատարել Կ. Ֆրապպին և Մ. Վալիջին[9]: Այս թեմային են նվիրված նաև Թ. Բաբալիի[10], Զ. Բարանի[11], Մ. Դիքքայայի և Դ. Օզյաքըշըրի[12], Ջ. Վալիևի[13], Յ. Կոգանի[14] աշխատությունները:

Կարելի է առանձնացնել մի շարք հեղինակների խումբ, ում աշխատությունները, նվիրված լինելով կովկաս-կասպիական տարածաշրջանի էներգետիկ անվտանգության խնդիրներին, օգտակար են եղել Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցության էներգետիկ բաղադրիչն ուսումնասիրելիս: Դրանց շարքում կարելի է առանձնացնել Գ. Մատտիտտի և Ջ. Մարիոտտի աշխատությունը[15], որը ուսումնասիրելով 1990-ական թթ. «Բրիթիշ Փեթրոլիում» (ԲՓ) ընկերության ներգրավվածությունը ԲԹՋ նավթամուղի նախագծում, արժեքավոր աշխատություն է Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան էներգետիկ համագործակցության ձևավորման ուսումնասիրման տեսանկյունից: Այս առումով կարելի է առանձնացնել նաև Ջ. Ջոզեֆի աշխատությունը[16], որը

---

[8] **Petersen A.**, Integration in Energy and Transport: Azerbaijan, Georgia, and Turkey, Lanham, MD & London: Lexington Books, 2016.

[9] **Frappi C., Valigi M.**, Patterns for Cooperation in the Southern Caucasus Area: Azerbaijan, Georgia and Turkey - Triangular Diplomacy in the Shadow of Energy Strategy, ISPI, Working Paper № 57, 2015, http://www.ispionline.it/sites/default/files/pubblicazioni/wp_57_2015.pdf (հասանելի է առ 10.10.2017թ.).

[10] **Babali T.**, Implications of the Baku-Tbilisi-Ceyhan Main Oil Pipeline Project, *Perceptions*, Vol. X, No. 4, 2005, pp. 29-60.

[11] **Baran Z.**, The Baku-Tbilisi-Ceyhan Pipeline: Implications for Turkey, S. F. Starr, S. E. Cornell (eds.), *The Baku-Tbilisi-Ceyhan Pipeline: Oil Window to the West Oil Window to the West*, Central Asia-Caucasus Institute and Silk Road Studies Program, 2005, pp. 103-118.

[12] **Dikkaya M., Özyakışır D.**, Developing Regional Cooperation among Turkey, Georgia and Azerbaijan: Importance of Regional Projects, *Perceptions*, Vol. XIII, No. 1-2, 2008, pp. 93-118.

[13] **Valiyev J.**, Azerbaijan-Georgia-Turkey Triangle: The Main Features of Cooperation, *Caucasus International*, Vol. 5, No. 3, 2015, pp. 27-44.

[14] **Kogan E.**, Trilateral Military and Energy Security Co-Operation: Reactions From Moscow And Washington, Georgian Foundation for Strategic and International Studies, 2014.

[15] **Muttitt G., Marriott J.**, Some Common Concerns: Imagining BP's Azerbaijan-Georgia-Turkey Pipelines System, London, 2002.

[16] **Joseph J.**, Pipeline Diplomacy: The Clinton Administration's Fight for Baku-Ceyhan, Princeton University, 1999.

նվիրված լինելով ԲԹՋ նավթամուղի նախագծի շուրջ Բիլ Քլինթոնի նախագահության շրջանում ԱՄՆ-ի վարած քաղաքականությանը՝ կարևոր աշխատություն է Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի եռակողմ համագործակցության ձևավորման վրա ԱՄՆ-ի ազդեցությունը վերլուծելու և գնահատելու համար: Այս խմբի հեղինակներից կարելի է հիշատակել նաև Ջ. Քենզիի[17], Բ. Քութի[18], Ռ. Քաթլերի[19], Ռ. Իբրահիմովի[20], Ա. Յարոշևիչի[21], Կ. Կռաուեր-Պաչեկոյի[22], Ն. Սարտորիի[23] ուսումնասիրությունները: Բացի այս խմբի հեղինակներից՝ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի եռակողմ էներգետիկ համագործակցությունն ուսումնասիրելիս օգտագործվել են նաև Մ. Այդընի[24], Է. Քաչինսի, Ջ. Մանկոֆի և Օ. Բաքեսի[25], Ք. Նեյշնի[26], Շիրինի և Կակաչիայի աշխատությունները[27]:

Վերոնշյալ երեք երկրների միջև համագործակցության զարգացման խոչընդոտների հետազոտման տեսանկյունից կարելի է առանձնացնել Է. Նուրմամմադովի[28] և Թ. Զիյադովի[29] աշխատությունները: Ինչ վերաբերում է եռակողմ ռազմաքաղաքական համագործակցությանը, դրա

---

[17] **Canzi G.**, Turkmenistan's Caspian resources and its international political economy, S. Akiner (ed.), *The Caspian: Politics, Energy and Security*, London and New York, RoutledgeCurzon, 2004, pp. 181-199.

[18] **Coote B.**, The Caspian Sea and Southern Gas Corridor: a View from Russia, Atlantic Council, 2017.

[19] **Cutler R. M.**, Azerbaijan's Place in Euro-Caspian Energy Security, F. Ismailzade, G. E. Howard (eds.), *The South Caucasus 2021: Oil, Democracy and Geopolitics*, Washington, D.C., The Jamestown Foundation, 2012, pp. 107-129.

[20] **Ibrahimov R.**, Azerbaijan's Energy History and Policy: From Past Till Our Days, R. Ibrahimov (ed.), *Energy and Azerbaijan: History, Strategy and Cooperation*, Baku, SAM, 2013, pp. 7-53.

[21] **Jarosiewicz A.**, The Southern Gas Corridor: The Azerbaijani-Turkish project becomes part of the game between Russia and the EU, Warsaw, OSW, 2015.

[22] **Krauer-Pacheco K.**, Turkey as a Transit Country and Energy Hub: The Link to Its Foreign Policy Aims, Bremen, Forschungsstelle Osteuropa, 2011.

[23] **Sartori N.**, Can NATO enhance energy cooperation in the Caspian Region?, Rome, NATO Defense College, 2008.

[24] **Aydin M.**, Foucault's Pendulum: Turkey in Central Asia and the Caucasus, *Turkish Studies*, Vol. 5, Issue 2, 2004, pp. 1-22.

[25] **Kuchins A. C., Mankoff J., Backes O.**, Georgia in a Reconnecting Eurasia: Foreign Economic and Security Interests, CSIS, Lanham, Rowman & Littlefield, 2016.

[26] **Nation R. C.**, Russia, the United States, and the Caucasus, Carlisle, Strategic Studies Institute, 2007.

[27] **Shiriyev Z., Kakachia K.**, Azerbaijan-Georgian Relations: The Foundations and Challenges of the Strategic Alliance, *SAM Review*, Special Double Issue, Volume 7-8, Baku, 2013.

[28] **Nurmammadov E.**, Azerbaijan-Turkey relations through the prism of economic transactions: a view from Azerbaijan, M. Ismayilov, N. A. Graham (eds.), *Turkish-Azerbaijani Relations: One nation—two states?*, New York, Routledge, 2016, pp. 88-112.

[29] **Ziyadov T.**, Azerbaijan as a Regional Hub in Central Eurasia, Baku, ADA, 2012.

ինստիտուցիոնալացման նախադրյալներն ուսումնասիրելիս օգտագործվել են Մ. Չելիքփալայի[30], Ս. Աթեշօղլուի[31] աշխատությունները:

Սույն թեմայի ուսումնասիրման համար օգտակար են եղել նաև հայ հեղինակների աշխատությունները: Այս առումով հարկ է առանձնացնել Ռ. Սաֆրաստյանի[32], Վ. Տեր-Մաթևոսյանի[33], Լ. Հովսեփյանի և Վ. Իվանովի[34], Ա. Մանվելյանի[35], Գ. Արշակյանի և Ա. Եղիազարյանի[36] աշխատությունները:

Հաշվի առնելով թեմայի ժամանակագրական շրջանակները՝ Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցության համատեքստում տեղի ունեցող գործընթացները լայնորեն լուսաբանվել են լրատվական դաշտում: Մասնավորապես՝ օգտագործվել են Հայաստանի, Թուրքիայի, Վրաստանի, Ադրբեջանի տարբեր պետական հաստատությունների պաշտոնական կայքէջերը[37]: Օգտագործվել են, օրինակ, հայկական «Ռազմինֆո», վրացական «Սիվիլ Ջորջիա» լրատվական կայքերի, «Ազատություն» ռադիոկայանի վրացական ծառայության («Ռադիո թավիսուփլեբա»), ռուսական «Ռեգնում», ադրբեջանական «ԱՊԱ», «Թրենդ» լրատվական գործակալությունների, Ադրբեջանի պետական լրատվական գործակալության, թուրքական «Հյուրիյեթ դեյլի նյուզ», «Միլլիյեթ» օրաթերթերի կայքերի հրապարակումները[38]:

---

[30] **Çelikpala M.**, From a Failed State to a Weak One? Georgia and Turkish-Georgian Relations, *The Turkish Yearbook of International Relations*, Vol. XXXVI, Ankara University Press, 2005, pp. 159-199.

[31] **Atesoglu S.**, Mediterranean Fault Line - the Future of Greece and Turkey, N. Atesoglu Guney (ed.), *Contentious Issues of Security and the Future of Turkey*, Aldershot, Ashgate, 2007, pp. 151-176.

[32] **Սաֆրաստյան Ռ.**, Ռուսաստանը և Թուրքիան Հարավային Կովկասում. աշխարհառազմավարական զինադադա՞ր, *21-ՐԴ ԴԱՐ*, թիվ 4 (10), 2005, էջ 34-46:

[33] **Ter-Matevosyan V.**, Turkish-Georgian Strategic Partnership and Armenia (Kars-Akhalkalaki Railway Project), *Բանբեր Հայագիտության*, № 3 (9), 2015, էջ 174-187:

[34] **Овсепян Л., Иванов В.**, Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Южного Кавказа (Азербайджан, Грузия) и Центральной Азии, Ереван, ИПИ, 2010.

[35] **Մանվելյան Ա.**, Էներգետիկ անվտանգությունը և աշխարհաքաղաքական մարտահրավերները Կովկաս-կասպյան տարածաշրջանում, Երևան, Տիգրան Մեծ, 2015:

[36] **Արշակյան Գ., Եղիազարյան Ա.**, Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, Երևան, Էդիթ Պրինտ, 2014, Մաս առաջին:

[37] Տե՛ս, օրինակ, ՀՀ ԱԺ պաշտոնական կայքէջը՝ http://parliament.am/; Թուրքիայի Հանրապետության ԱԳՆ պաշտոնական կայքէջը՝ http://www.mfa.gov.tr/default.en.mfa; Վրաստանի ՊՆ պաշտոնական կայքէջը՝ https://mod.gov.ge/; Ադրբեջանի Հանրապետության Նախագահի պաշտոնական կայքէջը՝ http://president.az:

[38] Տե՛ս «Ռազմինֆո» լրատվական կայքը՝ https://razm.info/; «Սիվիլ Ջորջիա» լրատվական կայքը՝ http://www.civil.ge/eng/; «Ազատություն» ռադիոկայանի վրացական ծառայության կայքը՝ https://www.radiotavisupleba.ge/; «Ռեգնում» լրատվական գործակալության կայքը՝ https://regnum.ru/; «ԱՊԱ» լրատվական գործակալության կայքը՝ https://apa.az/; «Թրենդ» լրատվական գործակալության կայքը՝ https://www.trend.az/; Ադրբեջանի պետական լրատվական գործակալության կայքը՝ https://azertag.az/; «Հյուրիյեթ դեյլի նյուզ» օրաթերթի

Առանձին խնդիրների խորքային ուսումնասիրման առումով կարևոր դեր են ունեցել Վրաստանում գործող և նախկին պաշտոնատար անձանց, փորձագետների հետ մեր կողմից անցկացված կիսակառուցվածքային հարցազրույցները: Այս առումով արժեքավոր են նաև տարբեր պետությունների, միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված զեկույցները: Դրանց շարքում կարելի է առանձնացնել Եվրոպան Ասիային կապող տրանսպորտային ենթակառուցվածքների մասին զեկույցները, որոնց հիման վրա կարելի է գնահատել Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան տրանսպորտային միջանցքի ներուժը[39]:

Խնդրո առարկայի վերաբերյալ շահագրգիռ պետությունների բարձրաստիճան պաշտոնատար անձանց դիրքորոշումն ու ընկալումները վերհանելու համար օգտագործվել են նրանց մի շարք ելույթներ, ճեպազրույցներ, մամուլի ասուլիսներ, հարցազրույցներ[40]:

Առևտրի և ներդրումների ոլորտում Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցությունն ուսումնասիրելիս օգտագործվել են ՄԱԿ-ի[41], Եվրոստատի[42], Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության[43],

---

կայքը՝ http://www.hurriyetdailynews.com/; «Միլլիյեթ» օրաթերթի կայքը՝ http://www.milliyet.com.tr/:

[39] Տե՛ս, օրինակ, Joint Study on Developing Euro-Asia Transport Linkages, New York and Geneva, United Nations, 2008, http://www.unece.org/fileadmin/DAM/trans/main/eatl/in_house_study.pdf (հասանելի է առ 30.08.2016թ.); **Ludvigsen J., Mata I. L.**, Potential for RETRACK expansion in Europe (Part A) and in Asia (Part B), http://www.retrack.eu/downloadables/Deliverables/D8.3-Public-Potential%20for%20RETRACK%20expansion%20in%20Europe%20and%20in%20Asia-final-31082012.pdf (հասանելի է առ 30.08.2016թ.); TRACECA Route Attractiveness Index - TRAX: Road Index Calculation Methodology, Transport dialogue and interoperability between the EU and its neighbouring countries and Central Asian countries, http://www.traceca-org.org/fileadmin/fm-dam/TAREP/58jh/TECHNICAL_ DOCUMENTS/ROADS_Trax_methodology_ENG_01.pdf (հասանելի է առ 30.08.2016թ.):

[40] Տե՛ս, օրինակ, Речь Президента Ильхама Алиева на церемонии инаугурации - Дворец имени Гейдара Алиева, 24 октября 2008 года, http://lib.aliyevheritage.org/ru/7871416.html (հասանելի է առ 01.09.2017թ.); Ответы Президента Азербайджанской Республики Гейдара Алиева на вопросы журналистов в аэропорту Бина перед отбытием в турецкий город Трабзон - 29 апреля 2002 года, http://lib.aliyev-heritage.org/ru/31655198.html (հասանելի է առ 29.08.2017թ.); ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանի պատասխանները լրագրողների հարցերին Վրաստանի ԱԳ նախարար Գելա Բեժուաշվիլիի հետ համատեղ մամուլի ասուլիսի ընթացքում, http://www.mfa.am/hy/press-conference/item/2006/01/16/vo/ (հասանելի է առ 12.01.2017թ.); Interview with Irakli Alasania: the Defense of Georgia, *Turkish Policy Quarterly*, Vol. 12, No. 3, 2013, pp. 13-21:

[41] UN Comtrade Database, https://comtrade.un.org/ (հասանելի է առ 26.11.2017թ.).

[42] Eurostat, http://ec.europa.eu/eurostat (հասանելի է առ 30.10.2017թ.).

[43] საქართველოს სტატისტიკის ეროვნული სამსახური, http://geostat.ge/ (հասանելի է առ 26.11.2017թ.).

Ադրբեջանի պետական վիճակագրական կոմիտեի[44] և տնտեսական զարգացման նախարարության[45], Թուրքիայի կենտրոնական բանկի[46] և վիճակագրական ինստիտուտի[47] կողմից հրապարակված վիճակագրական տվյալները:

Թեմայի ժամանակագրական շրջանակները: Ատենախոսությունն ընդգրկում է 1991թ. Թուրքիայի կողմից Ադրբեջանի և Վրաստանի անկախության ճանաչումից մինչև 2016թ. Վրաստանի խորհրդարանական ընտրություններն ընկած ժամանակաշրջանը: 2012-2016թթ. «Վրացական երազանք» դաշինքի իշխանության շրջանում թե՛ կառավարությունում, թե՛ խորհրդարանում լուրջ դերակատարություն ունեին դաշինքի առավել արևմտամետ կուսակցությունները, իսկ 2016թ. ընտրությունների արդյունքում միանձնյա իշխանության եկավ չափավոր արևմտամետ «Վրացական երազանք - ժողովրդավարական Վրաստան» կուսակցությունը, ինչը հանգեցրեց Վրաստանի արտաքին, այդ թվում՝ տարածաշրջանային քաղաքականությունում նկատելի փոփոխությունների:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Ատենախոսության դրույթները կարող են օգտակար լինել Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը, ինչպես նաև Թուրքիայի, ԱՄՆ-ի, ՌԴ-ի, ԵՄ-ի հարավկովկասյան քաղաքականությունը ուսումնասիրողների համար, կիրառվել այս թեմաների վերաբերյալ բուհական դասընթացներում: Դրանք կարող են օգտակար լինել նաև ՀՀ արտաքին քաղաքականության մշակման գործընթացում:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված վեց գիտական հոդվածներում, որոշ դրույթներ ներկայացվել են նաև միջազգային գիտաժողովներում: 2016թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Վրաստանի Ռազմավարական և միջազգային հետազոտությունների հիմնադրամում հեղինակի՝ այցելու հետազոտող լինելու ընթացքում ատենախոսության որոշ դրույթներ քննարկվել են վերոնշյալ հիմնադրամի գիտաշխատողների հետ: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի կողմից:

Հետազոտության արդյունքները 2016-2017թթ. ուսումնական տարում ներդրվել են ԵՊՀ Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի «Տարածաշրջանային քաղաքականություն» մագիստրոսական կրթական ծրագրի «Վրաստանի տարածաշրջանային քաղաքականությունը», իսկ 2017-2018թթ.

---

[44] Azərbaycan Respublikasının Dövlət Statistika Komitəsi, https://www.stat.gov.az/ (հասանելի է առ 26.11.2017թ.).

[45] Azərbaycan Respublikasının İqtisadiyyat Nazirliyi, www.economy.gov.az/ (հասանելի է առ 03.12.2017թ.).

[46] Central Bank of the Republic of Turkey, http://www.tcmb.gov.tr/wps/wcm/connect/tcmb+en/tcmb+en (հասանելի է առ 26.11.2017թ.).

[47] Turkish Statistical Institute, http://www.turkstat.gov.tr/Start.do (հասանելի է առ 26.11.2017թ.).

ուսումնական տարում՝ «Վրաստանի և Ադրբեջանի տարածաշրջանային քաղաքականությունը» դասընթացներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից (ութ ենթագլուխներով), եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում են թեմայի արդիականությունն ու ժամանակագրական շրջանակները, սահմանվում են հետազոտության նպատակն ու խնդիրները, ներկայացվում են հետազոտության մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը և օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունը:

Առաջին գլուխը վերնագրված է **«Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ էներգետիկ համագործակցությունը»**: Այն բաղկացած է երկու ենթագլուխներից: Առաջին ենթագլխում, որը վերնագրված է ***«Կասպից ծովի նավթի արտահանման խնդիրը և եռակողմ համագործակցության ձևավորումը»***, ուսումնասիրվել է ադրբեջանական նավթի արտահանման հարցում էներգետիկ շահերի մերձեցման գործընթացը որպես առհասարակ Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցության ձևաչափի ստեղծման «շարժիչ ուժ»: Ուսումնասիրվել են 1990-ական թթ. առաջին իսկ կեսից ԲԹՋ նավթամուղի շուրջ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև համագործակցության հաստատմանն ուղղված առաջին քայլերը, Բաքու-Սուփսա նավթամուղի նախագիծը և վերջինիս հարցում Թուրքիայի վարած քաղաքականությունը: Ներկայացվել են ադրբեջանական «հիմնական նավթի» արտահանման ուղիների ընտրության հարցում առկա հակասությունները և դրանց հաղթահարման ուղղությամբ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի գործունեությունը: Դիտարկվել է ԲԹՋ նավթամուղի նախագծի դերը վերոնշյալ երեք երկրների արտաքին քաղաքականությունում, այդ թվում՝ միմյանց միջև հարաբերությունների փոխակերպումներում: Վերլուծվել և գնահատվել է այս ոլորտում Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի եռակողմ համագործակցության վրա ԱՄՆ-ի, ՌԴ-ի, ԵՄ-ի և ՀԲ-ի ազդեցությունը: Որոշակի անդրադարձ է կատարվում նաև ԲԹՋ նավթամուղով ղազախական նավթի արտահանման խնդրին:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում, որը վերնագրված է ***«Կասպից ծովի գազի արտահանման խնդիրը եռակողմ համագործակցության համատեքստում»***, ուսումնասիրվել է ԲԹԷ գազամուղի և առհասարակ ՀԳՄ-ի համատեքստում Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան էներգետիկ համագործակցության զարգացումը, ինչպես նաև կասպյան գազի արտահանման կարևորությունը Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի արտաքին քաղաքականության համատեքստում: Եռակողմ էներգետիկ համագործակցության տեսանկյունից դիտարկվել է նաև թուրքմենական գազի արտահանման խնդիրը, մասնավորապես՝ անդրկասպյան գազամուղի նախագիծը, վերհանվել են դրա շուրջ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի դիրքորոշումների միջև հակասությունները, և ուսումնասիրվել են

նախագծի քննարկումները վերոնշյալ երեք երկրների և Թուրքմենստանի միջև հարաբերություններում: Վերլուծվել և գնահատվել է այս խնդիրների շրջանակներում ԱՄՆ-ի, ՌԴ-ի և հատկապես ԵՄ-ի ազդեցությունը Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան էներգետիկ համագործակցության վրա:

Երկրորդ գլուխը վերնագրված է **«Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցությունը տրանսպորտի, առևտրի և ներդրումների ոլորտում»**: Այն բաղկացած է երկու ենթագլուխներից: Առաջին ենթագլխում, որը վերնագրված է ***«Եռակողմ համագործակցությունը տրանսպորտի ոլորտում»***, ուսումնասիրված է ԲԹԿ նախագծի ձևավորումը և զարգացումը Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցության համատեքստում, որի հիման վրա առաջարկվում է այդ նախագծի շրջանակներում երեք երկրների համագործակցությունը բաժանել երեք փուլի՝ 1993-2002թթ., 2002-2007թթ. և 2007թ.-ից մինչև մեր օրերը: Դիտարկվել է ԲԹԿ երկաթուղու նախագիծը Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի արտաքին քաղաքականության տեսանկյունից, վերլուծվել և գնահատվել է այդ նախագծի տարանցիկ ներուժը միջազգային տրանսպորտային միջանցքների համատեքստում և այդ ներուժի մեծացման ուղղությամբ երեք պետությունների համատեղ գործունեությունը: Ուսումնասիրվել է Բաքու-Թբիլիսի-Բաթում-Տրապիզոն (ԲԹԲՏ) Մոդելային մայրուղու նախաձեռնությունը որպես տրանսպորտի ոլորտում Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի համագործակցության ընդլայնման փորձ:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում, որը վերնագրված է ***«Եռակողմ համագործակցությունը առևտրի և ներդրումների ոլորտում»***, օգտագործելով Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի կողմից հրապարակված պաշտոնական վիճակագրական տվյալները՝ ուսումնասիրվել է այդ երկրների միջև առևտրի և օտարերկրյա ուղղակի ներդրումների դինամիկան, ընդ որում՝ ուսումնասիրվել են և՛ փոխադարձ առևտրի ու ներդրումների ծավալները, և՛ երեք պետություններից յուրաքանչյուրի տնտեսությունում կատարված ներդրումներում և արտաքին առևտրաշրջանառությունում մյուս երկու պետությունների տեսակարար կշիռը: Վերհանվել են երեք երկրների միջև առևտրի և ներդրումների զարգացման խոչընդոտներն ու սահմանափակումները, ուսումնասիրվել է այդ ոլորտում ինստիտուցիոնալ համագործակցության մի քանի հարթակ՝ «Մետաքսե ճանապարհի մաքսային նախաձեռնությունը», Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունը և հատկապես Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ գործարար համաժողովները:

Երրորդ գլուխը վերնագրված է **«Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ ռազմաքաղաքական համագործակցությունը»**: Այն բաղկացած է երկու ենթագլուխներից: Առաջին ենթագլխում, որը վերնագրված է ***«Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի անվտանգության խնդիրը եռակողմ համագործակցության համատեքստում»***, ուսումնասիրվել են վերոնշյալ խողովակաշարերի անվտանգության ոլորտում եռակողմ

համագործակցության նախադրյալները, իրավական հիմքը, մարտահրավերները: Գնահատվել է ԲԹՋ և ԲԹԷ խողովակաշարերի անվտանգության ապահովման գործում Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցության արդյունավետությունը:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում, որը վերնագրված է ***«Համագործակցության ինստիտուցիոնալացումը և հետագա զարգացումը»***, վերհանվել են այն գործոնները, որոնք խողովակաշարերի անվտանգության խնդրի հետ մեկտեղ նպաստեցին ռազմաքաղաքական համագործակցության ինստիտուցիոնալացմանը: Դիտարկվել է եռակողմ ռազմաքաղաքական համագործակցությունը Թուրքիայի և Վրաստանի (Ադրբեջանի պարագան դիտարկվել է չորրորդ գլխի երկրորդ ենթագլխում) արտաքին քաղաքականության համատեքստում: Ուսումնասիրվել են ինստիտուցիոնալացման պայմաններում երեք երկրների ռազմաքաղաքական համագործակցության գործիքակազմն ու սահմանափակումները:

Չորրորդ գլուխը վերնագրված է **«Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցությունը և Հայաստանը»**: Այն բաղկացած է երկու ենթագլուխներից: Առաջին ենթագլխում, որը վերնագրված է ***«Եռակողմ տնտեսական համագործակցությունը և Հայաստանը»***, նախ ուսումնասիրվել է Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի համատեղ էներգետիկ-տրանսպորտային նախագծերի շուրջ Հայաստանում ծավալված պաշտոնական դիսկուրսը, ապա տարածաշրջանային նշանակության տնտեսական նախագծերին Հայաստանի մասնակցության հարցի վերաբերյալ Թուրքիայի, Վրաստանի, Ադրբեջանի, ինչպես նաև ԱՄՆ-ի և ԵՄ-ի դիրքորոշումը: Ուսումնասիրվել են «Վրացական երազանք» դաշինքի իշխանության շրջանում Վրաստանի տարածաշրջանային քաղաքականությունում տեղ գտած փոփոխությունները և դրանց դերը տարածաշրջանային համագործակցության ծրագրերում Հայաստանի մասնակցության տեսանկյունից: Հաշվի առնելով այս և այլ գործոնները՝ քննության է առնվել այն հարցը, թե արդյոք Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցության տնտեսական բաղադրիչը սպառնում է ՀՀ անվտանգային շահերին:

Չորրորդ գլխի երկրորդ ենթագլխում, որը վերնագրված է ***«Եռակողմ ռազմաքաղաքական համագործակցությունը և Հայաստանը»***, ուսումնասիրվել է Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի դիրքորոշումն այն հարցի շուրջ, թե վերջիններիս եռակողմ ռազմաքաղաքական համագործակցությունն ինչպիսի առնչություն ունի Հայաստանի հետ: Ուսումնասիրվել է այդ հարցի առնչությամբ նաև Հայաստանի դիրքորոշումը, ապա քննության է առնվել այն հարցը, թե արդյոք Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի եռակողմ ռազմաքաղաքական համագործակցությունը սպառնում է ՀՀ անվտանգային շահերին:

«Եզրակացություն» բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները.

1. Եռակողմ համագործակցության ձևաչափը Թուրքիան, Վրաստանը և Ադրբեջանը ասոցացնում են ոչ միայն ընդհանուր, այլև յուրաքանչյուր պետության համար առանձին արտաքին քաղաքական և ներքաղաքական նպատակների իրականացման հետ, որոնք շատ հաճախ միմյանցից բավականին տարբերվում են, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ հակասում:

2. Եռակողմ համագործակցության տարբեր ոլորտների վրա արտաքին գործոնները ունեցել են տարբեր աստիճանի ազդեցություն: Եթե տրանսպորտի և ռազմաքաղաքական ոլորտների վրա արտաքին ազդեցությունը գրեթե բացակայում էր, ապա էներգետիկ ոլորտում առանցքային նշանակություն ունեին միջազգային նավթագազային մի շարք ընկերություններ, միջազգային կառույցներ և պետություններ: Կասպյան նավթի արտահանման հարցում եռակողմ համագործակցության կայացման գործում Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի հետ մեկտեղ հավասարապես կարևոր ներդրում է ունեցել ԱՄՆ-ն, առանց որի հնարավոր չէր լինի ԲԹՋ նախագծի իրագործումը, մինչդեռ ԵՄ-ն այս առումով որևէ դերակատարություն չունեցավ: Փոխարենը՝ ԵՄ-ն և նրա անդամ պետությունները զգալիորեն նպաստեցին կասպյան գազի արտահանման համատեքստում Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի հարաբերությունների ակտիվացմանը և ՀԳՄ-ի շրջանակներում համագործակցության ինստիտուցիոնալացմանը, իսկ ԱՄՆ-ի դերը այս առումով բավականին սահմանափակ բնույթ էր կրում: Հարավային Կովկասում Ռուսաստանի նավթային և գազային քաղաքականությունը նպաստեց Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի էներգետիկ շահերի մերձեցմանն ու եռակողմ համագործակցության հաստատմանն ու զարգացմանը: ՌԴ-ն դեմ չէ կասպյան գազի արտահանման հարցում թուրք-վրաց-ադրբեջանական էներգետիկ համագործակցությանը, քանի դեռ այն Եվրոպայի գազային շուկայում մրցակցություն չի առաջացնում ՌԴ-ի դիրքերի համար:

3. Եռակողմ համագործակցությունը լուրջ կախվածություն ունի էներգետիկ ոլորտից, որից՝ որպես առհասարակ համագործակցության հիմքը դնող ոլորտի, ածանցվեցին և/կամ էապես ազդվեցին համագործակցության մյուս ոլորտները. էներգետիկան սկսեց կարևոր դեր խաղալ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև փոխադարձ առևտրում և ներդրումներում, ռազմաքաղաքական համագործակցությունում, և հաշվի առնելով երկաթուղիներով էներգակիրների փոխադրման բազմամյա փորձը՝ այն կարող է նաև այդպիսի դեր ստանձնել տրանսպորտային համագործակցությունում:

4. Կասպյան գազի արտահանման հարցում եռակողմ էներգետիկ համագործակցությունը հիմնականում վերընթաց զարգացում է ունեցել և լճացման է ենթարկվել միայն 2008-2010թթ.: Անդրկասպյան գազամուղի նախագիծը 1990-ական թթ. կազմում էր կասպյան գազի արտահանման համատեքստում Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցության առանցքը և կենսագործման դեպքում էականորեն կնպաստի վերջինիս ռազմավարական նշանակության աճին տարածաշրջանային էներգետիկ

գործընթացներում: Այս գազամուղի հարցում Թուրքիան, Վրաստանը և Ադրբեջանը չունեն միասնական դիրքորոշում. ազգային շահերով պայմանավորված՝ նախագծում համեմատաբար ավելի մեծ շահագրգռվածություն ունի Վրաստանը, ապա Ադրբեջանը, իսկ Թուրքիայի համար առաջնային է զուտ թուրքմենական գազի ներկրումը՝ անկախ նրանից, թե այն կներմուծվի Վրաստանի ու Ադրբեջանի տարածքով, թե դրանք շրջանցող ուղիներով:

5. ԲԹԿ երկաթուղու նախագծի շուրջ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի եռակողմ համագործակցությունը անցել է երեք փուլ, որոնցից յուրաքանչյուրը տարբերվում է երեք պետությունների միջև փոխգործակցության առանձնահատկություններով: Այս նախագծի շուրջ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի հաջող համագործակցությունից ածանցվեց տրանսպորտի ոլորտում եռակողմ համագործակցության ևս մեկ ուղղություն՝ համակարգված և ակտիվ գործունեություն ծավալել ԲԹԿ երկաթուղով բեռնափոխադրումներում երրորդ պետությունների ներգրավման և միջազգային տրանսպորտային ցանցին երկաթուղու ինտեգրման նպատակով: ԲԹԿ երկաթուղու՝ որպես Եվրոպայի և Ասիայի միջև տարանցիկ միջանցքի նկատմամբ ընդգծված հետաքրքրություն ունեցող պետությունների աշխարհագրական արեալը սահմանափակվում է Կենտրոնական Ասիայով, ինչպես նաև Աֆղանստանով: Ինչ վերաբերում է նախագծի ավելի գլոբալ չափմանը՝ ԲԹԿ երկաթուղին չի կարող առանցքային դեր խաղալ Եվրոպայի ու Ասիայի միջև առևտրում և կարող է հավակնել միայն այդ առևտրի աննշան մասի ապահովմանը:

6. ԲԹԲՏ Մոդելային մայրուղու նախաձեռնության ստեղծման փորձը ցույց տվեց, որ տրանսպորտի ոլորտում Թուրքիան, Վրաստանը և Ադրբեջանը չեն սահմանափակվում միայն ԲԹԿ երկաթուղով և պատրաստ են համակարգված ու համաձայնեցված քաղաքականություն վարել ավտոճանապարհային ոլորտում: Դա նաև ցույց տվեց, որ վերոնշյալ պետությունները ոչ պակաս կարևորություն են տալիս միմյանց կապող մայրուղիների ցանցի զարգացմանը: Ի տարբերություն ԲԹԿ նախագծի՝ ավտոճանապարհային տրանսպորտի ոլորտում Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի համագործակցությունը լայն աջակցություն է ստանում միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից:

7. Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև առևտուրն ու ներդրումները, չնայած ծավալների աճին, բավականին անհամաչափ զարգացում են ապրել: Երեք պետությունների միջև ներդրումային դաշտում առավել ակտիվ են եղել Թուրքիան և Ադրբեջանը, մինչդեռ վերջիններիս տնտեսությունում վրացական ներդրումները աննշան թիվ են կազմել: Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան առևտրական հարաբերությունները առավել մեծ կարևորություն են ունեցել Վրաստանի, քան Ադրբեջանի կամ առավել ևս Թուրքիայի համար: Միևնույն ժամանակ առևտրի ծավալների աճը չհանգեցրեց Վրաստանի կամ Ադրբեջանի արտաքին առևտրաշրջանառությունում համապատասխանաբար մյուս երկու պետությունների կշռի մեծացմանը, ինչը խոսում է թե՛ Վրաստանի, թե՛

Ադրբեջանի արտաքին առևտրում զուգահեռաբար այլ պետությունների դերի մեծացման մասին:

8. Առևտրի և ներդրումների ոլորտում ինստիտուցիոնալ համագործակցության եռակողմ ձևաչափը Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի համար դարձավ յուրահատուկ հարթակ առևտրական հարաբերությունների օրակարգային հարցերի քննարկման, փոխադարձ ներդրումների խրախուսման, առևտրային և ներդրումային քաղաքականության ներդաշնակեցման, երեք պետությունների պետական և մասնավոր սեկտորների, ինչպես նաև հենց մասնավոր ընկերությունների միջև համագործակցության նպատակով երկխոսության հաստատման համար: Ինչ վերաբերում է բազմակողմ փոխգործակցության մեխանիզմներին՝ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի համար դրանք կարևոր էին միմյանց միջև և այլ պետությունների հետ առևտրի, ինչպես նաև սեփական տարածքով տարանցիկ առևտրի խթանման նպատակով իրավական դաշտի ամրապնդման տեսանկյունից:

9. Չնայած ուսումնասիրվող ժամանակահատվածում փոխադարձ առևտրի և ներդրումների աճի միտմանը՝ առկա են մի շարք խնդիրներ, ինչպիսիք են Ադրբեջանի՝ ԱՀԿ-ի անդամ չլինելը, իրավական դաշտում առկա բացը կամ սահմանափակումները, նշված ոլորտներում ներքին բարեփոխումների բացակայությունը կամ ոչ բավարար լինելը, որոնք խոչընդոտում են Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև առևտրական հարաբերությունների էլ ավելի զարգացումը և փոխադարձ ներդրումների աճը, ինչն իր հերթին ուղղակիորեն բացասաբար է անդրադառնում տրանսպորտի ոլորտում երեք պետությունների համագործակցության և հատկապես՝ Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան տրանսպորտային միջանցքի մրցունակության վրա:

10. Կասպից ծովի էներգակիրների փոխադրման համար խողովակաշարերի կառուցումը և գործարկումը, դրանց անվտանգ և անխափան գործունեության վերաբերյալ միջազգային մի շարք պայմանագրերով ստանձնած պարտավորությունները Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի մոտ հասունացրին խողովակաշարերի անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով համատեղ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունը, ինչը հանգեցրեց երեք պետությունների ուժային կառույցների միջև եռակողմ բազմամյա համագործակցության հաստատմանը: Թեպետ սկզբնական շրջանում խողովակաշարերի պայթեցումները և նավթի գողությունը էլ ավելի ընդգծեցին անվտանգության ապահովման կոլեկտիվ ջանքերի անհրաժեշտությունը, երեք պետությունների համատեղ զորավարժությունների միջոցով դեռևս չի հաջողվել էականորեն բարձրացնել խողովակաշարային անվտանգության մակարդակը (առնվազն Թուրքիայի տարածքում), ուստի նոր հարձակումների վտանգը Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի եռակողմ համագործակցության համար շարունակում է մնալ մարտահրավեր, որին կողմերը հարկադրված կլինեն ավելի շատ ուշադրություն դարձնել ՀԳՄ-ի և նրա մաս կազմող Անդրանատոլիական գազամուղի (ԹԱՆԱՓ) գործարկումից հետո:

11. Դեռևս 1990-ական թթ.-ից երեք պետությունների զինված ուժերի միջև փոխգործակցության տարբեր մեխանիզմների ձևավորումը, ապա խողովակաշարերի անվտանգության շուրջ համագործակցության հաստատումը և Վրաստանի պաշտպանության նախարարի պաշտոնում Ի. Ալասանիայի նշանակումը, ի վերջո, հանգեցրին Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի ռազմաքաղաքական համագործակցության ընդլայնմանը՝ ի դեմս ինստիտուցիոնալ համագործակցության հաստատման և մի քանի տեսակի զորավարժությունների անցկացման: Եվ չնայած արձանագրած առաջընթացին՝ այդ համագործակցությունը ընդգրկում էր ընդամենը մի քանի հարցերի շրջանակ և բավականին սահմանափակ բնույթ էր կրում:

12. Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցության տրանսպորտային-էներգետիկ բաղադրիչը դիտարկվում է որպես տարածաշրջանային նախագծերից ՀՀ-ի մեկուսացման միջոց. ընդ որում՝ Ադրբեջանն այդպիսի մոտեցում որդեգրեց միայն Ի. Ալիևի նախագահ դառնալուց հետո: Հակադրվելով Թուրքիայի և Ադրբեջանի դիրքորոշմանը՝ Վրաստանը կողմ էր Հայաստանի հետ համատեղ տարածաշրջանային նախագծերի իրականացմանը, ինչի համար բարենպաստ պայմաններ ստեղծվեցին միայն 2012թ. Վրաստանում իշխանափոխությունից հետո: «Վրացական երազանք» դաշինքի իշխանության օրոք (2012-2016թթ.), բացի Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցության ձևաչափից և դրա հիմքը կազմող նախագծերից, Վրաստանը սկսեց լրջորեն հետաքրքրվել նոր նախագծերի հեռանկարներով և այդ նպատակով մի շարք քայլեր ձեռնարկեց Հայաստանի, Իրանի և Ռուսաստանի հետ տրանսպորտային և էներգետիկ համագործակցության հաստատման ուղղությամբ: Նման քաղաքականությունը հանգեցրեց Վրաստանի համար Թուրքիայի և Ադրբեջանի հետ եռակողմ համագործակցության բացառիկ նշանակության կորստի և դրականորեն ազդեց տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի ներգրավման հնարավորությունների մեծացման վրա՝ չեզոքացնելով այդ համագործակցությունից ՀՀ-ի համար հնարավոր ռիսկերի առաջացումը:

13. Բացասաբար վերաբերվելով թուրք-վրաց-ադրբեջանական համատեղ նախագծերին՝ Հայաստանը առավել ընդգծված կերպով դեմ արտահայտվեց ԲԹԿ երկաթուղու կառուցմանը և նույնիսկ քայլեր ձեռնարկեց նախագծի հետագա զարգացումը կասեցնելու նպատակով: Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցության ո՛չ տնտեսական, ո՛չ ռազմաքաղաքական բաղադրիչները չեն սպառնում ՀՀ ազգային անվտանգությանը՝ հիմք ընդունելով համագործակցության ուղղությունները և Վրաստանի հավասարակշռող գործոնը:

14. Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցության «շարժիչ ուժը» կշարունակի մնալ տնտեսական, հատկապես՝ էներգետիկ բաղադրիչը, իսկ ռազմաքաղաքական բաղադրիչը կպահպանի իր սահմանափակ բնույթը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Դավթյան Է., Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցությունը առևտրի և ներդրումների ոլորտում (1991-2016 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, № 3 (651), Երևան, 2017, էջ 47-62:
2. Դավթյան Է., Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցությունը և Հայաստանը, Հայագիտության հարցեր, № 2 (11), Երևան, 2017, էջ 111-122:
3. Դավթյան Է., Կասպից ծովի գազի արտահանման խնդիրը Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցության համատեքստում, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», № 2 (23), Երևան, 2017, էջ 19-29:
4. Դավթյան Է., Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի եռակողմ համագործակցությունը տրանսպորտի ոլորտում, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», № 1 (22), Երևան, 2017, էջ 10-24:
5. Դավթյան Է., Էներգետիկ ենթակառուցվածքների անվտանգությունը Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցության համատեքստում, «21-ՐԴ ԴԱՐ», 2 (72), Երևան, 2017, էջ 18-32:
6. Давтян Э., Трехстороннее военное сотрудничество Турции, Грузии и Азербайджана (ноябрь 2012 г. - май 2016 г.), «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», № 3 (21), Երևան, 2016, էջ 37-44:

ДАВТЯН ЭРИК ВАРДАНОВИЧ
ТРЕХСТОРОННЕЕ ЭКОНОМИЧЕСКОЕ И ВОЕННО-ПОЛИТИЧЕСКОЕ СОТРУДНИЧЕСТВО МЕЖДУ ТУРЦИЕЙ, ГРУЗИЕЙ И АЗЕРБАЙДЖАНОМ В 1991-2016ГГ.

Диссертация на соискание учёной степени кандидата исторических наук по специальности 07.00.02 - «Всемирная история, международные отношения». Защита состоится 5 июня, 2018 г., в 13:00, на заседании специализированного совета 006 "Всемирная история, международные отношения", действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, Ереван, пр. М. Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Цель диссертационной работы заключается в выявлении особенностей трехстороннего экономического и военно-политического сотрудничества между Турцией, Грузией и Азербайджаном в 1991-2016гг. и в его оценке с точки зрения интересов безопасности Республики Армения.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения и списка использованных источников и литературы.

В **введении** обосновываются актуальность темы и хронологические рамки работы, ставятся цель и задачи, представляются методологическая основа, научная новизна исследования, обзор использованных источников и литературы.

В первой главе, которая озаглавлена **"Трехстороннее энергетическое сотрудничество между Турцией, Грузией и Азербайджаном"**, изучается процесс сближения энергетических интересов как "движущая сила" становления формата трехстороннего сотрудничества между Турцией, Грузией и Азербайджаном. Освещается деятельность трех стран в связи с реализацией проекта нефтепровода Баку-Тбилиси-Джейхан (БТД). В контексте экспорта Каспийской нефти анализируется и оценивается влияние США, ЕС, России и Всемирного банка на трехстороннее сотрудничество между Турцией, Грузией и Азербайджаном. Рассматривается роль нефтепровода БТД в контексте внешней политики трех стран, а также вопрос транспортировки через него казахстанской нефти.

Изучается развитие сотрудничества трех стран в контексте газопровода Баку-Тбилиси-Эрзрум (БТЭ) и Южного газового коридора в целом. Рассматривается вопрос экспорта туркменского газа с точки зрения трехстороннего энергетического сотрудничества, выявляются существующие по этому поводу противоречия трех стран. В контексте экспорта Каспийского газа анализируется и оценивается влияние ЕС, США и России на трехстороннее энергетическое сотрудничество между Турцией, Грузией и Азербайджаном.

Во второй главе, которая озаглавлена **“Трехстороннее сотрудничество между Турцией, Грузией и Азербайджаном в сфере транспорта, торговли и инвестиций”**, исследовано развитие железнодорожного проекта Баку-Тбилиси-Карс, на основе которого предлагается разделить трехстороннее сотрудничество в рамках этого проекта на три этапа: 1993-2002гг., 2002-2007гг. и с 2007 года по настоящее время. Данный проект также рассматривается в контексте внешней политики Турции, Грузии и Азербайджана, оценивается транзитный потенциал проекта в контексте международных транспортных коридоров. Рассматривается Инициатива «Модельное шоссе» на участке Баку-Тбилиси-Батуми-Трабзон.

Используя официальные статистические данные Турции, Грузии и Азербайджана, исследована динамика торговли и прямых иностранных инвестиций между тремя государствами. Выявлены особенности, а также ограничения и препятствия к развитию торговли и инвестиций, рассмотрены некоторые платформы институционального сотрудничества.

В третьей главе, которая озаглавлена **“Трехстороннее военно-политическое сотрудничество между Турцией, Грузией и Азербайджаном”**, исследованы предпосылки, правовая основа и вызовы трехстороннего сотрудничества по поводу безопасности трубопроводов БТД и БТЭ. Оценена эффективность этого сотрудничества. Выявлены факторы, способствовавшие институционализации трехстороннего военно-политического сотрудничества. Рассмотрено сотрудничество в контексте внешней политики Турции и Грузии (случай Азербайджана рассмотрен в четвертой главе). Исследован инструментарий и ограничения сотрудничества в условиях институционализации.

В четвертой главе, которая озаглавлена **“Трехстороннее сотрудничество между Турцией, Грузией и Азербайджаном и Армения”**, изучен официальный дискурс в Армении по поводу турецко-грузино-азербайджанских совместных энергетических и транспортных проектов, а также позиции Турции, Грузии, Азербайджана, США и ЕС по поводу участия Армении в экономических проектах регионального значения.

Исследованы позиции Турции, Грузии и Азербайджана относительно отношения их трехстороннего военно-политического сотрудничества к Армении. В этой связи изучается также позиция Армении. Обосновывается, что трехстороннее экономическое и военно-политическое сотрудничество между Турцией, Грузией и Азербайджаном не угражает интересам безопасности Армении.

В **заключении** представлены основные результаты исследования.

ERIK VARDAN DAVTYAN

TURKEY-GEORGIA-AZERBAIJAN TRILATERAL ECONOMIC AND MILITARY-POLITICAL COOPERATION IN 1991-2016

The defense of dissertation will take place at 13:00, on 5th of June of 2018, at the meeting of the Specialized council 006 "World History, International Relations" at the Institute of Oriental Studies of NAS RA. Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan ave, 24/4.

The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the field of "World History, International Relations" 07.00.02.

SUMMARY

The main goal of the dissertation is to reveal the peculiarities of the Turkey-Georgia-Azerbaijan trilateral economic and military-political cooperation in 1991-2016 and assess that cooperation in the context of Armenia's security interests.

The dissertation consists of introduction, four chapters, conclusion and bibliography. The **introduction** substantiates the relevance and chronological framework of the research, sets the main goal and objectives, presents the scientific novelty, methodological basis of the research and the literature review.

The first chapter, entitled **"The Turkey-Georgia-Azerbaijan trilateral energy cooperation"**, examines the rapprochement process of energy interests as the "driving force" behind the emergence of the trilateral cooperation format between Turkey, Georgia and Azerbaijan. It discusses Turkish, Georgian and Azerbaijani policies concerning the realization of the Baku-Tbilisi-Ceyhan (BTC) oil pipeline project. The chapter analyzes and assesses the influence of the US, EU, Russia and the World Bank on the Turkey-Georgia-Azerbaijan trilateral cooperation in the context of Caspian oil exports. The role of the BTC pipeline and the issue of transit of the Kazakh oil are discussed in the context of foreign policies of Turkey, Georgia and Azerbaijan.

Then, the chapter analyzes the development of the Turkey-Georgia-Azerbaijan cooperation in the context of the Baku-Tbilisi-Erzurum (BTE) gas pipeline and the Southern Gas Corridor in general. The issue of the Turkmen gas exports is discussed in the context of trilateral energy cooperation and related differences among the three states are revealed. The chapter also analyzes and assesses the US, EU and Russian influence on the Turkey-Georgia-Azerbaijan cooperation in the context of Caspian gas exports.

The second chapter, entitled **"The Turkey-Georgia-Azerbaijan trilateral cooperation in the sphere of transport, trade and investments"**, investigates the evolution of the Baku-Tbilisi-Kars (BTK) railway project, based on which the project-related trilateral cooperation is suggested to divide into three phases: 1993-2002, 2002-2007 and from 2007 to the present. The chapter also discusses the BTK railway project in the

context of foreign policies of Turkey, Georgia and Azerbaijan and assesses its transit potential in the network of international transport corridors. The Baku-Tbilisi-Batumi-Trabzon Model Highway Initiative is discussed.

Based on Turkish, Georgian and Azerbaijani official statistical data, the chapter then examines the dynamics of trade and foreign direct investments between these states. It also reveals the peculiarities, as well as the limitations and obstacles, undermining the increase in trade and investments. Several platforms of institutional cooperation are discussed.

The third chapter, entitled **"The Turkey-Georgia-Azerbaijan trilateral military-political cooperation"**, examines the preconditions, legal base and challenges of trilateral cooperation, concerning the security of the BTC and BTE pipelines. The effectiveness of that cooperation is assessed.

Then, the chapter reveals the factors, contributing to the institutionalization of trilateral military-political cooperation. The cooperation is viewed in the context of foreign policies of Turkey and Georgia (the Azerbaijani case is discussed in the fourth chapter). The chapter also analyzes the toolkit and limitations of that cooperation in conditions of institutionalization.

The fourth chapter, entitled **"The Turkey-Georgia-Azerbaijan trilateral cooperation and Armenia"**, examines the official discourse in Armenia concerning the joint energy and transport projects of Turkey, Georgia and Azerbaijan. It analyzes the Turkish, Georgian, Azerbaijani, US and EU position on Armenia's participation in regional economic projects.

Then, the chapter analyzes the relationship between the trilateral military-political cooperation and Armenia from Turkish, Georgian and Azerbaijani points of view. In this regard, it also touches upon Armenia's position. It substantiates that the Turkey-Georgia-Azerbaijan trilateral economic and military-political cooperation does not threaten Armenia's security interests.

The **conclusion** sums up the main outcomes of the research.